

Արձանագրություն

Մայիսյան գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի 1 տարվա կատարված աշխատանքների հաշվետվությունից

Նախագահությամբ՝ Ս. Ղազարյանի

Քարտուղարությամբ՝ Մ. Աբգարյանի

Հաշվետու ժողովին մասնակցում էին համայնքի թվով 56 բնակիչներ և մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ պարոն՝ Ա. Այվազյանը:

Օրակարգում

Մայիսյան համայնքի ղեկավարի 2014 թվականի 1 տարվա կատարված աշխատանքների մասին

Զեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Մովսիսյան

Հարգելի համագյուղացիներ, հարգելի պարոն Այվազյան, Մայիսյան համայնքում 2014 թվականին կատարվել են մի շարք աշխատանքներ՝ բյուջեի եկամուտների հաշվին:

Վաղ գարնանը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման և պատակով պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում ներկրված պարարտանյութ /1 պարկը 6000 դրամ/ և դիզելային վառելանյութ /1/ 350 դրամ/ տեղափոխվել է համայնք և տրվել բնակչությանը:

Համայնքում սանիտարահիգիենիկ մաքրությունը միշտ եղել է առաջնակարգ խնդիր, որի համար կատարվել են աղբաթափման և աղբահեռացման աշխատանքներ, որի համար ծախսվել է 1,200 հազար դրամ:

Մայիսյան համայնքից 2 կմ հեռավորության վրա է գտնվում Սարգսի անվան թաղամասը, որտեղից 62 երեխաներ ձյան և անձրնի ժամանակ ոտքով հաճախում են Մայիսյանի սիջնակարգ դպրոց, սակայն գյուղապետարանը հնարավորություն է ստեղծել երեխաներին օգտվելու երթուղային տրանսպորտից, ինչպես նաև դպրոցական երեխաների բուժզննման համար տրամադրել տրանսպորտային միջոց:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում են գտնվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների և Արցախյան պատերազմում զոհված մայիսյանցիների

ընտանիքները՝ ստանալով դրամական օգնություն: Համայնքում խմելու ջուրն ապահովում և սպասարկում է «Նոր Ակունք» ՓԲԸ-ն՝ մատակարարելով 17 ժամյա ջրամատակարարում, սակայն շուրջօրյա մատակարարելու համար ավագանու որոշմամբ համայնքի կողմից կատարվել է 1000.0 միլիոն դրամի ներդրում հին խողովակները նորերով փոխարինելու համար:

Համայնքում գյուղապետարանի միջոցների հաշվին վերանորոգվել է տնամերձ հողամասերի ոռոգման խողովակները, որից օգտվում են 60 ընտանիքներ: Համայնքում դեռ մնում է չլուծված տնամերձ հողամասերի ոռոգման խնդիրը: Այդ ուղղությամբ Արմավիրի մարզպետ պարոն Ա. Ղահրամանյանի միջամտությամբ հորատվելու է նոր խորքային հոր տվյալ տարածքները ոռոգելու նպատակով: 2014 թվականի ոռոգման ջրի սակավության պատճառով «Արմավիր» ՋՕԸ -ի միջոցներով համայնքի կենտրոնական տարածքում գտնվող խորքային հորից անցկացվել է նոր խորովակաշար՝ 850մ երկարությամբ, տնամերձ և սեփականաշնորհված հողամասերը ոռոգելու նպատակով: Ինչպես նաև 350մ երկարությամբ խողովակաշար է անցկացվել ոռոգման նպատակով:

Համայնքի միջոցների հաշվին Այգեգործական թաղամասում գտնվող խորքային հորից անցկացվել է նոր խողովակաշար՝ 500մ. երկարությամբ՝ սեփականաշնորհված հողամասերը ոռոգելու նպատակով:

Համայնքի շուրջ 40հա սեփականաշնորհված հողատարածքների ոռոգման համար Արմավիրի մարզպետ պարոն Ա. Ղահրամանյանի աջակցությամբ շահագործման է հանձնվել նոր խորքային հոր, որին էլեկտրական լարեր անցկացնելու համար փոխանցվել է 800 0 հազար դրամ:

Մայիսյան համայնքում գործող նախադպրոցական կրթական համակարգին որպես դրամաշնորհ փոխանցվել է 800.0 հազար դրամ:

Վերանորոգում է կատարվել համայնքի գյուղապետարանի շենքում՝ ձեռք է բերվել նոր երկարյա դուռ, պատուհաններ, ճաղափանդակներ, իսկ ազատամարտիկների պուրակում տեղադրվել է գրուցարան:

2014 թվականի 2-րդ կիսամյակում Մայիսյան համայնքում շուրջ 1 կմ երկարությամբ անցկացվել է լուսավորություն:

2014 թվականի մարտի 29-ից 31-ը ընկած ժամանակահատվածում ցրտահարության պատճառով համայնքում 100%- օվ վնասվեցին 87.64 հա պտղատու այգիները: Անմիջապես համայնքի ղեկավարի կարգադրությամբ կազմվել է հանձնաժողով, ճշտվել վնասված այգիների տարածքները և այն ներկայացվել մարզպետարան:

Համայնքում անցկացվել են սի շարք միջոցառումներ՝

Կանանց միջազգային տոնի՝ մարտի 8-ի կապակցությամբ

Ամանորի կապակցությամբ համայնքի, Լախուկրթարանի, ինչպես նաև 1-4-րդ դասարանի շուրջ 200 երեխայի տրվել է Ամանորյա նվերներ:

Բյուջեի եկամուտները կազմում են՝

ա) Հողի հարկի գանձումներ՝ 100 %

բ) Գույքահարկի գանձումները 101,3 %

գ) Համայնքի սեփական եկամուտները կազմում են 100,9%

Ավարտելով զեկույցը՝ Ե. Մովսիսյանը համայնքի բնակչությանը ցանկացավ բերքատու տարի և անկորուստ ջերքահավաք, որից և կախված է բնակչության բարեկեցիկ կյանքը:

Ելույթ ունեցան Հ. Հակոբյանը, Գ. Սարգսյանը, Ա. Գիրակոսյանը, որոնք համայնքի ղեկավարի 2014 թվականի 1 տարվա կատարված աշխատանքները գնահատեցին բախարառ: Ելույթ ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ Ա. Այվազյանը ցանկացավ բնակչությանը բարեկեցիկ կյանք ինչպես նաև հողի հարկի և գույքահարկի գանձումները ժամանակին հավաքագրելու և հետագա աշխատանքները կատարելու համար 1 տարվա կատարված աշխատանքները գնահատեց բավարար:

Համայնքի հիմնախնդիրները

1. 30 հա տեղամերձ հողամասերի համար խորքային հորի վերանորոգում
2. Մանկապարտեզի ջեներ վերանորոգում
3. Գյուղամիջուակ ճանապարհների անմխիթար միճակը
4. Մշակույթի տան վերանորոգումը

Հանձնաժողովի նախագահ

Ս. Դազարյան

Քարտուղար

Մ. Ալզարյան

